Հովհաննես Վախթանգի Հովակիմյանի /ս/գործ թիվ ՄնԴ/2899/04/23/ սնանկության վարույթում առկա գույքի առուրդ-վաճառքի վերաբերյալ

2026-10-19 09:29:33

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

13.10.2026թ. հայտարարված Հովհաննես Վախթանգի Հովակիմյանի աճուրդը չի կայացել՝ հայտեր չլինելու պատճառով։
04.11.2026թ-ին ժամը 12։00-ին ՀՀ, ք.Երևան,Դավթաշեն վարչական շրջան Տ. Պետրոսյան 21 հասցեում (որը տեսաձայնագրվում է) պար-տապան Հովհաննես Վախթանգի Հովակիմյանի սնանկության գործով կառավարիչ (աճուրդի կազմակերպիչ) Ելենա Մկրտչյանի կողմից, ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգով (այսուհետ՝ աճուրդի կանոնակարգ) կանցկաց-վի բաց դասական (գնի ավելացման) եղանակով աճուրդ։
Վաճառքի ներկայացվող գույքի արժեքը 10 տոկոսով նվազեցված է նա-խորդ աճուրդի մեկնարկային արժեքից,համապատասխանաբար կազ-մելով.
Լոտ 1- ք.Երևան, Նոր Նորք համայնք 3 մ/շ. Քոչարյան փողոց թիվ 4 շենք, թիվ 61 հասցեում գտնվող 196.2 քմ մակերեսով, կիսանկուղային հարկի ոչ բնակելի տարածք /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 31032026-01-0303/։ Ոչ բնակելի տարածքը գտնվում է 5 հարկանի բազ-մաբնակարան շենքի կիսանկուղային հարկում, մուտքը շքամուտքից է, տարածքի ներքին հարդարումը գտնվում է զրոյական վիճակում, պա-տուհաններ չունի, ներքին բարձ-րությունը՝ 2,5-2,8 մ.,հանդիսանում է Հովհաննես Վախթանգի Հովակիմյանի և Սոնա Խաչիկի Պետրոսյանի համատեղ սեփականությունը - 15,195,519 ՀՀ դրամ։
Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարության հրա-պարակման օրվանից մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ 28.10.2026թ.՝ժամը 18։00, կարող են կանոնակարգով սահմանված կար-գով հայտ ներկայացնել սնանկության դատարան՝ հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Եր.Օտյան 53/2 կամ snank@court էլ.հասցեով։
Հայտում այլ դրույթնե-րից բացի պարտադիր նշվում է հայտատուի էլեկտրոնային փոստի հասցեն, և հայտատուին ուղղված՝ աճուրդի վերաբերյալ ծանուցումներն իրականացվում են հայտում ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով։ Հայտին կից ներկայացվում է աճուրդի մասնակցութ-յան վճարի և նախավճարի վճարման անդորրագրերը, ֆիզիկական անձինք՝ նաև իրենց անձնագրի պատճենը, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերը՝ նաև

իրենց պետական գրանցումը հաս-տատող փաստաթղթերի պատճենները:
Աճուրդի մասնակցության վճարը լոտի մեկնարկային գնի 1 /մեկ/ տո-կոսի չափով (բայց ոչ ավել,քան 300,000 դրամ), իսկ նախավճարը՝ 5/հինգ / տոկոսի չափով, մինչև հայտի ներկայացման պահը պետք է վճարվեն պարտապանի սնանկության հատուկ հաշվին (« ՎՏԲ - Հայաս-տան Բանկ» ՓԲԸ, թիվ 16041049618815 հ/համար)՝ որպես ստացող նշելով Հովհաննես Վախթանգի Հովակիմյանի սնանկության գործով կառավարիչ՝ Ելենա Մկրտչյան:
Հայտի ներկայացմանն առնչվող հարցերը, աճուրդի անցկացման և աճուրդի արդյունքներով պայմանավորված հարաբերությունները կանոնակարգվում են աճուրդի կանոնակարգով (տես նաև կանոնա-կարգի 6-9 կետերը):
Եթե լոտերի թիվը մեկից ավելի է, ապա դրանց աճուրդները կազմա-կերպվում են շարադրված հերթականությամբ:
Հայտը համարվում է աճուրդի կանոնակարգի խախտմամբ ներկայաց-ված, և այն ներկայացնող հայտատուն աճուրդին մասնակցելու իրա-վունք չի ստանում և որպես աճուրդի մասնակից չի գրանցվում կանոնա-կարգի 18-րդ կետով նախատեսված դեպքում:
Հայտատուների գրանցումը սկսվում է աճուրդից 15 րոպե առաջ: Հայտատուն (նրա ներկայացուցիչը) պարտավոր է գրանցվելու համար կառավարչին ներկայացնել իր լիազորությունները հաստատող փաս-տաթուղթը (եթե հայտատուի անունից հանդես է գալիս լիազորություն ունեցող անձը) և իր անձնագիրը:
Հայտի ձևը, աճուրդի կանոնակարգը, հաղթողի կողմից ստորագրման ենթակա՝ աճուրդի արդյունքների մասին արձանագրության օրինակը կարող եք ստանալ հետևյալ հղումով. https://cloud.mail.ru/public/MBc8/pXxYV2UeQ, կամ աճուրդի օրը՝ աճուր-դի կազմակերպչից (սնանկության գործով կառավարչից)՝ աճուրդն սկսվելուց առաջ՝ աճուրդի անցկացման վայրում:
Լոտի աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջար-կած մասնակիցը: Աճուրդի հաղթողը (այդ թվում՝ հարկային գործակալը) լոտի վաճառքի գինը պարտավոր է ամբողջությամբ վճարել աճուրդի օրվանից հետո՝ 10 օրվա ընթացքում:
Եթե լոտը իրավաբանական անձի սեփականություն է, ապա լոտի վա-ճառքի գինը ներառում են նաև հարկերը, իսկ եթե ֆիզիկական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գնի մեջ չեն ներառվում հար-կային գործակալների կողմից վճարման ենթակա հարկերը:
Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման, ան-հրաժեշտության դեպքում՝ դրանից ծագող իրավունքների պետական գրանցման և/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահան-ջելու և/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը, առու-վաճառքի պայմանագրի կնքման համար

անհրաժեշտ և առուվաճառքի պայմանագրից բխող բոլոր այլ (ցանկացած տեսակի) ծախսերը կա-տարվում են աճուրդի հաղթողի կողմից:
Լոտը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվանից 10 օրվա ընթացքում, աշխատանքային օրերին և ժամերին՝ դրա գտնվելու վայրում՝ նախապես պայմանավորվելով կառավարչի հետ:
Կառավարչի հետ պայմանավորվելու, լոտի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցով կարող եք փոստով կամ էլեկտրոնային փոստով (mkrtchyanelena87@gmail.com) նամակ գրել սնանկության գործով կառավարչին:

37477638123

mkrtchyanelena87@gmail.com

ՀՀ ք.Երևան Դավթաշեն վարչական շրջան Տիգրան Պետրոսյան փողոց 21